ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«17» փետրվարի 2022 թվականի N:66-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի № 423-Ա ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-4-րդ մասերի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 21-ի «Ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խումբ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2021 թվականի փետրվարի 4-ի N:26-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 423-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2022 թվականի
փետրվարի 17-ի №66-Ա որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2021 թվականի
դեկտեմբերի 21-ի № 423-Ա որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ

Արսեն Աբրահամյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղար, խմբի ղեկավար,
Արթուր Նաջարյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական, խմբի անդամ,
Գայանե Կարապետյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ,
Ժորա Սադոյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի իրավաբանական բաժնի ավագ մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող, խմբի անդամ,
Նաիրա Հարությունյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ մասնագետ, խմբի անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է